7875

633.5
P-25

1858

2002
011

ԲԱՄԲԱԿԻ

ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Պ. Գ. Ռ. Բ.

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Պ. ՉԵՐՉԻԼԻ

1858

633.5
Բ-25

16966

533.5
1 - 25
Printed in Turkey

ԸՆԴ

ԲԱՄԲԱԿԸ Տաճկաստանի մէջ ալ յառաջացընելու համար՝ մօտերս յատուկ ջանք մը ըլլալով Ընդհանրոց կողմանէ, յարմար սեպեցի ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ վրայօք ունեցած տեղեկութիւններս համառօտելով հրատարակելու. յուսալով թէ Տաճկաստանի զանազան կողմերը գտնուող Երկրագործները կարողպիտի ըլլայ՝ որ ասոր ալ արդիւնքը վայելեն:

39
ՀԱՅԿ-ՏՕՐԱ.

Printed in Turkey

ԲԱՄԲԱԿԻ
ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՅՍԵՐՈՒՆ յառաջ գալուն համար՝ հողին զօրութենէն և ջուրէն զատ տաքութիւն ալ հարկաւոր ըլլալը գիտցուած բան մըն է. բայց ոմանք շատ և ոմանք քիչ տաքութեան կարօտ ըլլալնուն պատճառովը՝ տաք երկրի մէջ յառաջ եկած բոյսերը պաղ երկիրներու մէջ, և պաղ երկիրներու մէջ յառաջ եկածներն ալ տաք երկիրներու մէջ յառաջ չեն գար, նոյնպէս ցած դաշտերու մէջ եղածները բարձր լեռան վրայ եղածներէն տարբեր կ՚ըլլան: Ուրեմն Երկրագործ մը որ փափաք ունի տեսակ մը բոյս յառաջացընելու՝ միայն ցանելու եղանակը և անոր դարման տանելը գիտնալն ու յարմար հող ճանչնալը բաւական սեպելու չէ, այլ գտնուած տեղին կլիման կշռելու ալ հմտութիւն ունենալ

կը պահանջուի : Բուսաբանութեան և բնաբանութեան տեղեկութիւն ունեցողները աս մասին դժուարութիւն չեն կրեր : Ընդ Երկրագործները որ իրենց դանուած երկրին մէջ նմանը չեղած բոյս մը մշակել կ'ուզեն, ամենէն աղէկ կերպն աս է՝ որ մէկ երկու տարի մէյմէկ քիչ ցանելով փորձեն՝ ու եթէ աւելի ցանելու ետեւէ ըլլան : Բամբակի մշակութիւն ընել ուզող Երկրագործներն ալ աս կերպը գործածելով՝ նախ յառաջ գալն ու չգալը փորձով դիտնալու և եթէ շատին սկսելու են. բայց բամբակը մէկ քանի տեսակ ըլլալով՝ մէկը չյաջողած ժամանակը միւսէն յուսահատելու չեն, ամէն տեսակն ալ փորձի տակ առնելու են :

Բամբակին աղէկ յառաջ եկած տեղը՝ Հնդկաստանի և Ամերիկէի պէս աշխարհիս շատ տաք կողմերն ըլլալով՝ անտեղուանքը ծառի պէս կ'ըլլայ, և հինգ տասը տարի դիմանալով շատ արդիւնք յառաջ կը բերէ. ան տեղուանքներէն զատուելով ցուրտ եր-

կիրներ թէ որ բերուի՝ միայն մէկ տա-
րի մը կը դիմանայ, և ամէն տարի
հունտը նորէն ցանել հարկ կ՚ըլլայ։
վերջապէս թէ որ ալ աւելի ցուրտ եր-
կիրներ տարուի՝ մշակութիւնը անկա-
րելի կ՚ըլլայ։

Այս երկրին (Տաճկաստան) շատ կողմերը բամբակ կրնայ յառաջ գալ, բայց
աս բանին ձեռք զարնողը շատ հոգ տա-
նելու է. թէ որ հունտը գէշ է՝ փո-
խելու է, և թէ որ գիտցած կերպե-
բուն մէջը պակսութիւն մը ունի՝ ա-
դէկ կերպը սորվելէն ետ կենալու չէ։
Բամբակ ցանելու տեղը սաստիկ հո-
վերու դէմ ըլլալու չէ, ու վրայի
բուսական հողը խորունկ և թեթև
ու խոնաւ ըլլալու է, և արօրով
կարելի եղածին չափ խորունկ հեր-
կելու է։ Ամմատները որչափ երկրն-
նալով խորունկը իջնան, այնչափ ար-
դիւնքնին առատ կ՚ըլլայ։ Դաշտերը և
ձորի մօտ գտնուած հողերը ամենէն
յարմար են, որովհետև լոկ աւազի
պէս չեն չորնար և ոչ ալ թանձր կաւի

և կամ քարոտ տեղի պէս կը կարծրա-
նան։ Բամբակը աղբի շատ հարկաւորու-
թիւն ունի, բայց գործածուելիք աղբերը
ըստ բաւականին փտած ը լլալու են որ
դիւրին լուծուին։ Ընդհանրապէս հին-
ցած լեճի և աւազաններու մէջ գըտ-
նուած տիղմերն ու կոյանոցներու (լա-
ղէմ) մէջ եղածները շատ օգտակար են
աս բոյսին։

Բամբակին հունտը չոր տեղ մը՝
մանաւանդ վրայի մաղերովը (ԷՆ-Յ)
պահուելու ը լլայ՝ մէկ քանի տարի
կրնայ դիմանալ, բայց միշտ նորը և
ծանրը ու հասունը աղէկ է։ և դարձ-
եալ թէ որ ուրիշ երկիրներէ հունտ առ-
նուելու ը լլայ՝ նայելու է որ բերուած
տեղին ու ցանուելիք տեղին կլիմաները
մէկզմէկու յարմար դան։ տաք տեղէն
պաղ տեղ եկած ժամանակը՝ կլիմային
ընտանեցընելու համար մէկ երկու տա-
րի ցանելու կարօտ է։ Բամբակի տե-
սակ մ՚ալ կայ որ հունտին հետ ան աս-
տիճան փակած է որ՝ որչափ սարկուի՝
տակաւին չափով մը վրան կը մնայ, և

հունտերը մէկզմէկու խառնուած ըլլալով ցանուած ժամանակը դժուարութիւն կու տայ. անանկները ցանուելէն առաջ բարակ հողով կամաւորով շփելու է:

Հունտը ցանելու ժամանակը ամէն տեղ միօրինակ չէ. որ ժամանակ դիշերները հողերը չեն սառիր՝ ան ժամանակը ցանելու է. ընդհանրապէս Մարտի կէսէն մինչև Ապրիլի կէսը կրնայ ցանուիլ. և ամպոտ օր մը ցանելը աղէկ է որ եռևէն անձրև դալով շուտով բուսնի. թէ որ հողին մէջ շատ ժամանակ մնալու ըլլայ՝ իւղոտ ըլլալովը կը փտաի, ու ճճիներն ալ կը վնասեն. կանոնաւոր կերպով ցանուելէն ետքը ամէնն ալ կը բուսնին:

Բամբակին հունտը սփռելով կ'ըլլայ՝ բայց կարգ կարգ անկելը ամենէն աղէկ է, ինչու որ հունտը քիչ երթալէն զատ՝ արտին ամէն կողմն ալ միօրինակ կ'ելլէ և մէջերնին օդ կը բանի և հարկաւոր եղած դարմանն ալ աղէկ կերպով և քիչ ծախքով կ'ըլլայ:

Եղունին հողը խորունկէկ հերկելէն վերջը՝ ձմեռը մէկ երկու անգամ նորէն հերկելով և վայրի խոտերն ալ հանելով աղէկ մը պատրաստելու է, և գարունին նորէն հերկելով՝ շտկելու և բահով կարգ կարգ ծակեր բանալու և իրեք իրեք՝ չորս չորս հունտ մէջը ձգելու է. կամ արօրով շնտակ գիծեր բանալու և հունտը կարգով մը ցանելու է։ Հունտին վրայ շատ հող պէտք չէ ծածկել, մանաւանդ երբոր տնկուած ատենը հողը թաց ըլլայ. միայն մէկ երկու մատ հող ծածկելու և թեթև կերպով մը հողը նստեցընելու է։ Սովորաբար ութ օրէն կը ծըլլի հունտը՝ բայց երբեմն աւելի կ'ուշանայ։ Կարգերուն մէջ տեղերը մէկ կանգունի չափ ըլլալու է, և մէկ գիծի մէջ եղող բոյսը միւսէն կէս կանգուն հեռու ըլլալու է. որովհետև թէ որ աւելի մօտ ըլլայ, բոյսերը տկար կը մնան և արդիւնքը քիչ կ'ըլլայ։ Բոյսերը հողէն դուրս ելլել սկսելուն պէս՝ ամենէն առաջին գործը քովերնին

բուսած վայրենի խոտերը մաքրելն է, և դարձեալ տերևները չորս եղածին պէս զգուշութեամբ մը բահով հողերը կակուղցընելու և դէպ 'ի արմատին տակը քաշելու է, որ հաստատուին և տաքութենէն պաշտպանուին. և թէ որ քանի մը արմատ մէկ տեղ կամ թէ մէկ-զմէկու մօտ բուսած է՝ միայն մէկ աղէկ հատը թողելով մնացածները քաղելու է, և թէ որ արտին մէկ կողմը ցանցառ մնացած է՝ ան քաղուածներովը լրացընելու է: Թէ որ աս բանը զանց առնուի՝ արտին մէկ քանի տեղերը պարապ կը մնայ և ան պարապ մնացած տեղուանքը հարկաւոր եղած դարմանն ալ չբլլալով արտը կը դէշնայ և երկրորդ տարուան հունձքին ալ վնասը կը հանի:

Բամբակի արտերը ջրուելու երկիրներ ալ կան՝ չջրուելու ալ. աս բանիս մէջ օդին տաքութեանը՝ հողին տեսակին և բամբակին տեսակին նայելով գործ տեսնելու է. թէ որ օդը խիստ տաք և հողը շատ չոր է, կամ հունտը ջրուելով յառաջ եկած տեղէ մը եկած է՝ ջրելու է. բայց

եթէ ջրել աշխարկ ը լլայ՝ բոյսերը պըզ-
տիկ եղած ժամանակը կրնայ ը լլալ մեծ-
նալէն վերջը ջրուելու ը լլայ՝ ծաղիկ բա-
նալը և հասնիլը ետ կը մնայ։ Կան անանկ
տեղեր որ բամբակին բոյսը իր ուժը
մեծ մասամբ հասակին տալով արդիւն-
քը քիչ կ'ը լլայ՝ կամ ետ մնալով
չհասնիր. անանկ երկիրներու մէջ ծա-
ղիկները չորնալ ու բոյսը ոտնաչափէ
մը աւելի բարձրանալ սկսելուն պէս՝
զօրութիւնը վար զարնել և բոյսը
հասցընել տալու համար ծայրերնին ը-
ղունքով կտրելու է։ Ծաղիկը թափե-
լէն ետքը բժոժներ կը ճեւանան որ ա-
ռաջ կանաչ են ու ետքը կը դեղնին և
բամբակը հասնելուն բժոժը կը չորնայ
և ինքնիրեն ճաթելով կը բացուի. ան
ժամանակը կողով մը առնելով ամէն օր
արտին մէջը պտըտելու և բացուած բը-
ժոժներուն մէջէն երկու մատով բամ-
բակը բռնելով քաշելու է, և կողովի
մէջ դնելէն ետքը շարժելու ու ցնցելու
է որ մէջի գտնուած որդերը կամ կտոր-
ուանքը թափին. ոմանք բժոժնե-

ը փրցընելով կը ժողվեն ու եռքը բամբակը կը հանեն. աս կերպով գործը երկու անգամ ըլլալէն զատ բժոժը կոտրելով՝ կտորուանքը բամբակին կը խառնուի և գինը կը կոտրէ: Եւ որովհետև բամբակին մաքրութիւնը և ճերմակութիւնը գինը կ՚աւելցնէ՝ ուրեմն աս մասին հարկաւոր եղած աս փոքր աշխատութենէն ալ ետ կենալու չէ. չոր և տաք ժամանակներ ժողվելու և հովթը-փուկ՝ չոր ու մաքուր տախտակամածի մը վրայ տարածելով մէկ քանի օր չորցընելու է. զգուշանալու է որ ան փոռուած տեղը կենդանիներ չմտնեն ու հունտը ուտեն: Վերջին գործն է բամբակը հունտէն զատելը. որովհետև բամբակ ըսածնիս ուրիշ բան չէ այլ հունտին վրայի մազերը, աս մազերը հունտին շատ բակած ըլլալուն համար զատելը բաւական դժուար է, և ձեռքով որ ըլլալու ըլլայ՝ շատ ժամանակ կ՚ուզէ: Աս գործը կատարող քանի մը տեսակ գործիքներ կան, բայց ամենէն յաջողութիւն գտածն է Ամերիկայի մէջ հնա-

բաներին որ ձեռն կ'ըսուի. ասիկայ քիչ մը զօրութիւնով խիստ շատ գործ կը տեսնէ և բամբակը մաքուր կը հանէ։

Տաճկաստանի աղքատիկ գիւղից մէջ ալ սա պարզ գործիքը կրնայ գործածուիլ, որոնք երկու գլանաձև փայտեր են ու մէկմէկու հակառակ կը դառնան. ան գլաններուն վրայ մէկ ծայրէն մէկալը դէպ 'ի երկայնութիւնը ճեղքեր ըլլալով՝ բամբակը անոնց վրայ կը կռուի, ու հունտը վար կը թափի։ Ետքէն ան գլաններուն վրայի բամբակը ժողվելով մէջը թէ որ աղտ մը կայ՝ հանելու ու բամբակը կապոց ընելու է։

Բամբակը վնասող ճճիներ կան՝ որոնցմէ մէկն ալ բամբակի ճճի ըսուածն է. ասիկայ երկու իրեք օրուան մէջ բոլոր տերևները կ'ուտէ, և ինչուան տասը ամիս կը քշէ ասոր տուած վնասը։ Ընդհանրապէս Հնդկաստան ու Ամերիկա աղատ չեն աս ճճիէն ու չէ թէ Եւրոպա։ Ասոնք ջնջելու ուրիշ ճար չկայ, բայց եթէ անդադար հոգ ու արթնութիւն։

105.



7875

2013